

## ԱՐԵՎԱՏԱՀԱՅ ԲՆԱՇԽԱՎՀ

### ՀԱԿՈԲ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

### ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ստորև ներկայացվող հիմնադրական հեղինակը գրող-արձակագիր, բնաշխարհի գրականության նշանավոր ներկայացուցիչ, ազգային-հասարակական գործիչ Գեղամ Տեր-Կարապետյանն է՝ Մշո Գեղամը (1866-1918): Ծնվել է Տարոնի Խելպյան գյուղում, քահանայի ընտանիքում: Մինչև 1908 թ. պաշտոնավարել է Մշո Ս. Կարապետ վաճրում, Մշո հայոց առաջնորդարանում իբրև քարտուղար: 1908-ին տարոնահայությունը նրան ընտրել է Պոլսի Խորհրդարանի անդամ և Ազգային ժողովի պատգամավոր: Տարիներ շարունակ թթակցել է պոլսահայ պարբերական-ներին: Չերմեռանդ հավատացյալ էր և Հայ Առաքելական Եկեղեցու զավակ: Քրիստոնեությունը հավատամբ էր նրա համար և կենսահայեցողության բնորոշ գծերից մեկը:

Հայոց Եկեղեցին ու քրիստոնեությունը եղել են Գեղամի մշտասևո ուշադրության կենտրոնում: Իր ասեղծագործություններում նա բազմից անդրադարձել է հոգևորականների կերպարներին, նրանց գործունեությանը, ավերված ու գործող վաճերին, Եկեղեցիներին ու մատուներին, ազգային միաբանության գործում կրոնի ու Եկեղեցու դերին: Մեկ առ մեկ անձամբ հավաքել և կարգավորել է Տարոնի վաճերի ու Եկեղեցիների հին ձեռագիր հիշատակարանները, որոնք ամփոփել են երկու ստվարածավալ հատորների մեջ՝ «Թիշատակարաններ» խորագրով (1869 առուն):

Ինչպես վկայում է Կարո Սասունին, 1930 թ., երբ աշխատում էր Գեղամի երկերի անդրանիկ միհատորյակը կազմելու վրա, և գրողի ձեռագրերի հավաքածուն իր տնօրինության տակ էր, «Թիշատակարան»-ների առաջին հատորը արդեն կորած էր (տե՛ս Գեղամ Տեր-Կարապետեան, Տարօնի աշխարհ, Փարիզ, 1931, էջ 15): Մնացել էր երկրորդ հատորը՝ 831 հիշատակարանով, որը սակայն այսօր Բներութի Համագային հայ կրթական և մշակութային միության վարժարանի արխիվի՝ Գեղամի ձեռագրերի ցուցակում չի նշվում, այսինքն՝ նույնական կորած է: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ այդ ձեռագրերի մեջ էր «Մշո մոլատատուր Ս. Կարապետ»: Իր գրոց ու բրոց բանկլիկը՝ աշխատությունը՝ բաղկացած մոտ 1500 էջից և զետեղված երկու խոչշոր հատորներում: Դրանք ամբողջությամբ նվիրված են «Մշո Ս. Կարապետի վաճքին և այդ թեմի մէջ մտնող վաճերի ու պատմութեան, պատմական անցքերին ու վաճահայրութեանց յաջորդականութեան, դպրութեանը և աւանդութիւններուն: Պատմութիւնը սկսած է հայոց քրիստոնէական հաւատքին

դառնալին առաջ և հասցուած է մինչև 1907 թուականը»: Սրանց միայն մեկ հինգեռորդն է հոդվածներով տպագրվել արևմտահայ մամուլում, որ վերաբերում է 19-րդ դարի պատմությանը: Այս հոդվածները հավաքելով՝ հետինակը կատարել է անհրաժեշտ լրացումներ և կցել իր ձեռագիր հատորներին (Կ. Սասունի): Մենք, որ առիթ չենք ունեցել տեսմեղու թերութիւն համազգային վարժարանի արխիվում պահպող Գևորգի ձեռագրերը, այլ ունենք սուս դրանց ցուցակը, հաստատ չենք կարող ասել՝ այդ հատորները պահպանվում են, թե՛ ոչ, քանի որ ցուցակում նշված չեն այդ հատորները առանձին-առանձին և էջարվերը:

Հրապարակվող ձեռագիրը, որի պատճենը 2000 թ. Բեյրութից ուղարկել է Գեղամի հիշատակի հանդեպ խորին ակնածանքով տոգորված, այժմ հանգուցյալ երախտապարզ Հրազ Տամանակեսյանը, բաղկացած է ձեռագիր 82 էջից: Այն ամփոփում է Հայասքրիստոնեական շրջանին ու քրիստոնեության մուտքին վերաբերող ավանդությունները, հնանակներում կառուցվող բազմեւների, Հովհաննես-Մըկրտչի վարքի և Աշխարհների, Հիսուսի ծննդյան-հայտնության կարևոր դրվագներ՝ ձերկայացված գրողի հյութեղ ու Ակարագեղ գրչով:

Գեղամն առաջարանում ատում է, որ ձեռագիրն երկուներին զյուղական օդաներում, աշխարհիկ հեքիաթներից ու զրուցներից բացի, պատմում էին ավանդություններ կուտաների, վաճքերի, եկեղեցների, սրբերի, մարանց մասունքների, զանազան հրաշազան անցքերի մասին: Հայրը՝ Տեր Կարապետ Հովհաննեսպալանը, զյուղի քահանան էր, և նրա մոտ հաճախ էին հավաքվում «գիտին ծերուկ ու նորընծայ տէրտէրներ ու հնոք տիրացուներ» և փոխնիփոխ ժամերով շարունակում իրենց զրուցը: Նա կարևոր է համարել նաև նշել, որ իր շարադրածը հուշ գիտական-քննական վերլուծություն չէ, այլ պատամեկան տարիների տպավորություններ, որ ստացել է միամիտ երեց-տիրացուների «գեղացնակ» պատմվող յուրօրինակ հեքիաթ-զրուցներից:

Բնագիրը ներկայացված է նույնությամբ: Կատարված են սուս մասմակի, անհրաժեշտ սրբագրական ճշտումներ:

Այս հրապարակումը լիովին համարում է հայաշխարհում քրիստոնեության պատականորեն ընդունական ոգուն և խորհրդին: